



ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ

Ռ. ՏԱՐԻ 1908

Տարեկան 15 ֆր. ուկի — 6 րբ.:
 Վնջարանայ՝ 8 ֆր. ուկի — 3 րբ.:
 Մեկ թիւ կարճե 1-50 ֆր. — 70 կ.:

ԹԻՒ 6 ՅՈՒՆԻՍ

ՌՐԱՌԱՐԱՆԱԿԱՆ

ՍԱՀՄԱՆՔ ԵՒ ԿԱՆՈՆՔ

ՎԱՐՈՒ ԵՎԵՂԵՑԻՈՑ

ՄԱՐՈՍԵ ՆԵՐՍԵՍԻ ՀՈՍՈՑ (ՎԹՈՂԻԿՈՍԹ)

ՀՕՐԵՈՊԵՏԻ

ԱՌԱՋԱՐԱՆ

(Ըրումսխոհիւն):



Մի գառնանք դունի
 իւր թէ 527 թ.
 կայացած ժողովի իր
 կանոնին:

Սյդ կանոնի Բա-
 ստամեանի ընդունած
 բնագիրն, ինչպէս
 տեսանք, ունի՝ վասն
 զազգական կին առ-

նելոյ, ցնիգերդն մի իշխեսցէ, զարրորդն
 ապաշխարեսցէ եւ երրորդը մկնեսցին եւ ա-
 պաշխարեսցնն: Բոլոր ձեռագրերի ընթեր-
 ցուածներն ի նկատ առած մք կազմած բնա-
 գիրն ունի՝ վասն զազգական կին առնելոյ.
 Վերջոյ մի իշխեսցէ, չարրորդն ապաշխարեսցէ.
 եւ երրորդն մկնեսցին եւ ապաշխարեսցին:

Ճ

Ընդգծած «վերջոյ» մի իշխեսցէ, ընթեր-
 ցուածը տուել են acefgtuk ձեռագրերը՝:

Մեր ստացած բնագրի համեմատ՝ այդ կա-
 նոնը տրամադրում է.

1. Չհամարձակուին երրորդ աստիճանի
 արենակիցներ կին առնել.

2. Չարրորդ աստիճանում պսակուղները
 պէտք է ապաշխարեն.

3. Իսկ երրորդ աստիճանում թէ որ պսա-
 կուին, այդպիսիները թող բաժանուին եւ ապա
 ապաշխարեն:

Բաստամեանի տուած բնագրի համեմատ
 լինում է այսպէս.

1. Հինգերորդ աստիճանում չհամարձա-
 կուին պսակուիլ.

2. Չարրորդ աստիճանում պսակուղները
 պէտք է ապաշխարեն.

3. Երրորդ աստիճանում թէ որ պսա-
 կուին, բաժանուին եւ ապաշխարեն.

Ս. Սեդրակեան որովհետեւ ընդունում է,
 որ ցճինգերորդ ասելով այդ կանոնը չարրորդ
 աստիճանն է ուզում հասկացնել, ուստի եւ նրա
 հետեւողութեամբ կ'ունենանք.

1. Չարրորդ աստիճանում չհամարձա-
 կուին պսակուիլ.


2. Չարրորդ աստիճանում պսակուղները
 պէտք է ապաշխարեն.

Ն. Սեդրակեան ու չարրորդին ենք հրաւիրում իր
 կանոնի «ցնիգերդը» ընթերցուածի վրայ, որը մեզ թուում
 է թէ «ցնիգերդ», ուղիւ ընթերցուածի ազատութիւն լինի
 ոչ ոքի գրել ձեռքից:

3. Երբորդ աստիճանում թէ որ պատկոհին, բաժանուին եւ ապաշխարեն.
 Նոյն է ընդունում եւ Գ. Առաքելեանը: Ենթադրենք, որ իրօք այդ «43» կանոնները Ներսէս Բ օրով Գուշի ժողովում են սահմանուել:

Արդ, երբ մի ժողով է հրաւիրում նոր կանոններ սահմանելու, պէտք է նա իր արած որոշումները կամ հետեւողութեամբ նախընթացի անէ, կամ նրան հակառակ. կամ խտացնի կամ թուլացնի եղած արգելքները կամ որոշումները: Այդ նկատմամբ մենք կարող ենք ասել, որ խնդրի առարկայ եղող կանոնը չկարողանալով արգելք դնել չորրորդ աստիճանի արեւակիցների պատկնբի վրայ, նա այդպիսի աստիճանում ամուսնացածների վրայ ապաշխարանք է դնում, որ նշանակում է, թէ այդ աստիճանի պատկները թույլատրելի են թէեւ ոչ բացարձակ: Բայց եթէ մի ժողով չի կարողանում չորրորդ աստիճանի վրայ արգելք դնել, նա ինչպէս կարող է ասել, թէ հինգերորդ աստիճանի արեւակիցները Համարձակուի պատկեւել: Ըէ որ սա հակասութիւն կը լինէր. բերենք աւելի շոշափելի օրինակ:

եղայրներ




Բաստամեանի ստեղծ այդ կանոնը արգելում է հինգերորդ աստիճանի պատկը, այսինքն Արամը չպիտի համարձակուի կին առնել Անահիտին (5-րդ աստիճ.). բայց եթէ Արամը կին առնէ Մարիամին (4-րդ աստիճ.) այն ժամանակ պիտի ապաշխարէ: Այլ կերպ ասած Արամը իր հօրեղբոր թոռանը չպիտի համարձակուի առնել, բայց թէ որ պատկուի հօրեղբոր աղջկայ հետ, դրան արգելք չկայ, բացի որ եկեղեցական ապաշխարանք պիտի քաշէ, ու պատկն էլ նոյն պատկը պիտի մնայ: Սա ի հարկէ անմուտութիւն է. չի կարելի իրար հակասող եւ իրար հերքող միտք միեւնոյն կանոնին վերագրել: Չի կարող նոյն կանոնը խիստ արգելք դնել, երբ մեկը կին է ուզում առնել հօրեղբոր թոռանը, եւ միեւնոյն ժամանակ թույլ կերպով արամագրել որ, նոյն մարդուն թույլատրելի է կին առնել իր հօրեղբոր աղջկան: Գուշի ժողովի հայրերը որքան էլ ազգես լինէին, այնուամենայնիւ այդպիսի անտարամբան գործ չէին բունի եւ չեն էլ բռնել երբէք. ինչպէս եւ երբէք նոյն միտքը չի ունեցել «43» կանոնների խմբագրողը:

Բարեբախտաբար մի խումբ ձեռագրեր պահել են այն ընթացիկում, որ իր կանոնի սկզբնական բնագիրն է ունեցել եւ որը արդէն առաջ ենք բերել: Արդ թուում է որ, եթէ նոյն իսկ այդ ձեռագրերը չլինէին էլ, այնուամենայնիւ այդ կանոնի անտարամբան խմբագրութիւնը հարկադրաբար պիտի մտածել տար, թէ նրա մեջ թերութիւն կայ, թէ նա աղճատուած է: Այդպիսի կասկածի մէջ ընկանք մենք, երբ զբաղուած էինք հայ եկեղեցու ամուսնական Հաստութեանց խնդրով եւ մեր այդ կասկածը լիովին արդարացած ձեռագրիների համեմատութեամբ, որի արդիւնքն աճա մեր վերականգնած բնագիրն է:

Սեղադեանի եւ Գ. Առաքելեանի ասածով տեսանք, որ նոքա ընդունում են. — Արամը չպիտի համարձակուի առնել Մարիամին (4-րդ աստիճ.). Արամը Մարիամի հետ պատկուելու դէպքում պիտի ապաշխարէ. իսկ այդ ապաշխարութիւնը նշանակում է, որ Արամը եթէ ուզենայ, կարող է Մարիամին առնել, դրան ոչ մի արգելք չկայ: Այդ երկուսի կողմից սա էլ մի պնդութիւն է, որ առաջ է եկել «ցՏինգերորդ» ընթացիկում կամայականորէն չորրորդ աստիճան ընդունելուց. մինչդեռ իրենց ընդունած բնագիրն ունի «ցՏինգերորդն մի իշխեսցէ եւ զչորրորդն ապաշխարեսցէ...» այլ բան է, եթէ «չորրորդն» չունենայինք. բայց եթէ չորրորդի մասին արդէն պարզ եւ որոշ կայ, այն ժամանակ «ցՏինգերորդը» չորրորդ չի կարող նշանակել:

Երբ վերականգնած բնագրով խօսելով, կ'ունենանք Թ. 2. Մկրտիչը չպիտի համարձակուի կին ուզել Մարիամին (3-րդ աստիճ.):

եղայրներ



մինչդեռ Մկրտիչը որդի Արամը կարող է առնել Մարիամին (4-րդ աստիճ.), սակայն առնելուց յետոյ պիտի եկեղեցական ապաշխարանք քաշէ: Ասածին իրաւադրութիւնը Հաստատում է կանոնի երբեք ու վերջին մասը, որով երբորդ աստիճանի եղած պատկները լուծելի են հաշուում, ու լուծելուց յետոյ նաեւ կնթակայ ապաշխարանքը:

րանքի: Դա մի խիստ պատժական օրէնք է նոցա համար, որոնք կը համարձակուէին երրորդ աստիճանի արեւակից կին առնել: Այդ բոլորից մի եղբակացութիւն կայ, որին եւ գալիս ենք, այն է — որ խնդրի առարկայ եղող Իբ կանոնը արգելք է դնում երբեք աստիճանի պատժանքի համար, Տեսն էլ սահմանելով մի պատժական կարգ: Այս ստեպկէտից դա կրկնութիւն է Շահապիվանի ժողովի ԺԳ-րդ կանոնի. աւելի ճիշտն ասած նրա բովանդակութիւնը՝ սեղմ, կրճատ ձեւով:

Թէ որպիսի արամաբանական կայ կայ մեր վերականգնած բնագրի բոլոր մասերի մէջ, այդ ընթացողը տեսաւ, մի բան որ հնարաւոր չէ գտնել Բաստամեանի, բայց նա մանաւանդ Ա. Սեդրակեանի ընդունած բնագրով եւ բացարութիւններով:

Հարկաւոր է աւելցնել, որ եթէ իրօք այդ կանոնը Ներսէս Բ-ի գումարած ժողովն է դրել. դա միայն մի բան է ցոյց տալիս, որ Շահապիվանի ժողովի դրած արգելքները երրորդ աստիճանի արեւակից պակների վրայ, ժամանակի ընթացքում թուլացած են եղել. այնքան թուլացած, որ նորից նոյն կարգը հաստատելու հարկի մէջ են եղել:

Դուռնի այդ ենթադրեալ ժողովը մի այլ զօրեղ պատճառով էլ չէր կարող հինգերորդ աստիճանի պակների արգելքը սահմանել եւ ահա թէ ինչու: Ներսէս Բ. Դուռնի ժողովը գումարել է 553—5 թուականի մէջ եւ ոչ թէ 527 թ. որպէս ընդունում են Բաստամեան եւ նրա հետեւողութեամբ Սեդրակեան:

Ընդհանուր կեկեղեց. իրաւունքի գիտութիւնը ցոյց է տալիս, որ Յուստինիանոս մեծը Դուռնի այդ ժողովից առաջ կայսերական օրէնքով վերահաստատել էր այն կարգը, որով արգելում էր երրորդ աստիճանի արեւակիցների ամուսնութիւնը եւ թոյլ տրուում չորրորդ աստիճանը: Այսինքն ինչպէս Շահապիվանի ժողովը, հետեւողութեամբ Թեոդոս մեծի որդոց օրէնքի, վերահաստատող Աշտիշառի ժողովի կանոնը, այնպէս էլ Յուստինիանոս մեծը վերահաստատեց Արկադի եւ Սեդրիոսի օրէնքը: Մինչ ի Տրուլեան ժողովը (692 թ.) Յուստինիանոս մեծի այդ օրէնքով կարող էին իրար առնել երկու եղբոր, եղբոր եւ քրոջ եւ երկու քրոջ որդիք իրար:

Այժմ, եթէ Դուռնի ժողովն զբաղուէր ամուսնական չհասութեանց խնդրով, այն էլ

Յուստինիանոսի այդ յայտնի օրէնքի հրատարակութիւնից անմիջապէս յետոյ, պարզ է, որ այդ վերջինը պիտի ազդէր հայ օրէնսդիրների վրայ, ու նրանց օրինակ ծառայէր: Արդ պարզ է, եթէ ընդունինք նոյն իսկ, որ Դուռնի ժողովն զբաղուէլ է այդ խնդրով, այն ժամանակ նա այլ արգելք չէր դնի, ինչ որ Բիզանդական կայսերական օրէնքն էր դնում. ասել է այս ստեպկէտից էլ Բաստամեանի, Սեդրակեանի եւ Աւաքեյեանի եղբակացութիւնները հիմնաւոր չեն եւ հակասում են պատմական իրողութեանը:

Գ. Աւաքեյեանի մասին վստահ կարող ենք ասել, որ եթէ նրա ձեռքի մաս լինէին այն նիւթերը, որի վրայ մենք մեր եղբակացութիւններն ենք անում, նա էլ նոյն հետեւանքների կը հասնէր, ինչ որ մենք:

Ա. եպ. Սեդրակեանի մասին խօսք չէ կարող լինել, որ նա կարողանար մասնագիտական ծանր խնդիրների քննութեան մէջ մտնել, քանի որ նա հարկաւոր իրաւաբանական պատրաստութիւնը չուներ: Նրանից չենք կարող եւ չենք էլ պահանջի, որ նա բանասիրական նախընթաց աշխատանքի վրայ հիմնէր իր եղբակացութիւնները: Սակայն Բաստամեանի, որ իրաւաբանական պատրաստութիւն ունէր, ինչու է այդպէս թէթեւ կերպով վերաբերուել քննութեան նիւթ եղող այդ խնդրին. դա մեզ համար մնում է քիչ բացատրելի: Ծամնայն դէպք այդ վերաբերմունքը մասնագէտի լուրջ վերաբերմունք չէ:

Բաստամեանի վերաբերմունքը դէպի իր ձեռքի ուսումնասիրութեան նիւթը ակն յայտնի անելու համար, ցաւեմով հանդերձ հարկաւորուած ենք ցոյց տալ, թէ հակառակ այն բանին, որ նա երբեմն մի առ մի թուում է կանուկազբեր, որոնցից իբր ինքն օգտուել է, բայց իրապէս նա իր թուած ձեռագրերից շատերի բովանդակութեանն իսկ ծանօթ չէ: Նա Գոշի Դատաստանագրքի առաջաբանի մէջ խօսելով Դուռնի, 43^{րդ} կանոնների մասին, ծանօթութեան մէջ յայտնում է, որ ընդ. Մաս. ձեռագիր կանոնագրքերի մէջ Թ. 741, 742, 743, 746, 570, 752, 759, 761, որպէս եւ Սիեոսում գործածուած ձեռագիր կանոնագրքի մէջ, որպիսի այդ 38 կանոնից, կան այլ եւս 42 կամ 43 կանոններ նոյն Ներսէսին յատկացրած. եւ ուշադրութեան արժանին այն է, որ յիշեալ բոլոր կանոնագրքերի մէջ այս երկու տեսակ կանոնները միշտ միասին են դրած՝ երբեմն նախ 38-ը եւ յետոյ 42 եւ երբեմն ընդհակառակը:

Իրողութիւնն այս է. — Թ. 741, 742, 743 եւ 750 ձեռագրերի մէջ, 43^{րդ} կանոններին հետեւում են Ներսէսի եւ Ներշապուհի 38 կանոնները. Թ. 761-ի մէջ միայն նորա գրուած են Ներսէսի եւ Ներշապուհի կանոնների տակը. Թ. 746 եւ 759 մէջ նորա իրարից շատ հեռու են ընկած. իսկ Թ. 752-ը թէեւ ներսից կողի վրայ գրուած է կանոնագիրը. բայց ինքը — ձեռագիրն ունի այս բովանդակութիւնը.

1. Հարց-պատասխանի.
2. Մեռանք առաքելոց.
3. Սահմանք քերականութեան.
4. բառարան.
5. ողբ Աստուածածնի. եւ այլն. պարզ սասծ նա կանոնագիրը չէ:

Բերնիք մի օրինակ եւս. նոյն առաջաբանի 115 երեսում յայտնում է՝ «Որովհետեւ Մխիթար իւր յօգուածներէց մեծագոյն մասը... Ժողովել է եկեղեցական եւ հայրագոյնական կանոններից Աստուածաշնչից եւ այլն, մենք հարկաւոր համարեցինք ցոյց առլ իւրաքանչիւր յօգուածի աղբիւրը, որտեղից վերցրած է այն: Սրա համար հարկաւոր եղաւ անդադար աչքի տակ ունենալ երեսնի չափ ձեռագիր կանոնագրեր հետեւեալ Թ. 735, 737, 738, 739, 740, 741, 742, 743, 744, 745, 746, 747, 748, 749, 750, 752, 753, 754. եւ այլն եւ Մխոզի օրինակ սոցա մէջ ընտրելագոյնն է Թ. 761 կանոնագիրը: Այդ ձեռագրերի մասին ճշմարտութիւնն այս է: Բաստամանի առաջ բերած Թ. 735, 744, 747, 752, 753 կանոնագիրը չեն՝, այլ զանազան խրատական եւ այլ գրուածքների Ժողովածուներ, թէեւ ներսի երեսի վրայ Թ. 752-ի նման կանոնագիրը է գրուած: Թ. 754 համառօտ կանոնագիրն է՝ քաղուած զանազան կանոններից. Թ. 745-ի մէջ Առաքելոց, արտաքին մի քանի Ժողովների, Աթոնասի, Ս. Սահակի եւ Ղըրմեցու կանոնները կան: Աերջին երկու կանոնագրերը ոչ մի համեմատութեան պէտք չէին կարող գալ իրենց պակասաւոր լինելու պատճառով: Թ. 749-ը նոյնպէս լքու կանոնագիրը չէ. Գօշի զատաստանագիրը կիսատ է, ինչպէս եւ բոլոր միւս Ժողովների եւ Ս. Հարց կանոնները չունին:

Բաստամանն այդ թուած ձեռագրերից միայն Թ. 749, 761 եւ Մխոզի օրինակներով

է Թ. 753-ի բովանդակութիւնը. 1. զատութիւն գտեղաց. 2. Թեմի Առասարդի. 3. Հարցունք Ս. Բարսեղի. Թ. 744. 1. Եովհան Երզնկացու խրատ հասարակաց եւ այլն. Թ. 747. 1. խրատական թուղթ Ներս. Շնորհաւոյ. 2. Թեմի եւ խրատ Առասարդի. 3. Եովհանու ստացեալ յազգա նեոնի եւ կատարածի օչխարհի:

է օգտուել ու նրանց տարբերութիւնները նայել, բայց առաւելագոյն Թ. 761 օրինակինը: Իր առաջը աշխատութեան մէջ նա այդ երեք ձեռագրի անունն է առաջ բերում, բացի գրանցից, իր թուած այլ ձեռագրի ընթերցուած չունի նշանակած, որից պարզ է, որ նա նրանց ամենեւին ձեռքի տակ չի ունեցել: Ըստ կարիեան ցուցակի նա կարող էր օգտուել Թ. 736. 740. 751 կանոնագրերով, իսկ ըստ Գեորգեան ցուցակի Թ. 86. 87. 88. 89, 90. 446. 449 եւ այլն կանոնագրերով: Իսկ այդ կանոնագրերը ինչպէս եւ Մխիթար Գօշի այլ ձեռագրեր, որոնց մէջ ամենահին ու ընտիր օրինակներ կան նա ոչ միայն աչքի տակ չէ ունեցել այլ եւ իր, իբր թէ, նայած, ձեռագրերը թուելիս, չի էլ յիշում:


Գժուարանում ենք ենթադրել որ Բաստամանն զիտուարեալ սուտ է խօսում՝ յիշելով մի շարք ձեռագրերի անուններ, որոնք, հակառակ իր ցանկութեան՝ կանոնագրեր չեն: Նա իր աշխատանքի արժէքը բարձրացնելու սին ցանկութեամբ առաջնորդուած բայց է արել կարիեան ցուցակը եւ այնտեղից արտագրել մի շարք «կանոնագրեր», անուն կողմ ձեռագրերի թուահամարներ, առանց նոյն իսկ այդ ձեռագրերը տեսնելու եւ թերթելու: Ունայն եւ անտեղի ցանկութիւն, որ հատուցուել է բաւականին թանկ գնով: Ի՞նչ կասկած, որ Բաստամանի աշխատութեան արժէքը հազիւ թէ շատ առժեքն է, եթէ նա ցոյց տար ճշտու այն կանոնագրերը որոնցից օգտուել է. մինչդեռ այժմ երբ բացուում է, առաջ բերուած ոչ գովելու արժանի նրա վերաբերմունքը, այն ժամանակ կասկածի տակ է ընկնում նրա առած նիւթն ու բարեխղճութիւնը:

Արկնում ենք, ցուելով ենք յիշում այս հանգամանքները:

Այս կարեւոր շեղումից յետոյ դառնանք մեր խնդրին: Ի՞նչ կանոնի մասին վերելում առաջ բերուածներէց յետոյ մեր վերջնական եզրակացութիւնն այն է, որ նա սահմանում է երբեք սատիճանի արեւակիցների պակսի խիստ արգելք, եւ կողմնակի կերպով թողլ է առիւս չորրորդ սատիճանի արեւակիցների ամուսնութիւն:

Ճիւղագրութիւն հաշուելիս պիտի իւրաքանչիւր ծնունդ մի սատիճան հաշուիլ. այդ է սուում հռոմեական բանաձեւը: Այդ հիման վրայ, երբ սուում են որ մի Ժողով արգելել է երրորդ սատիճանի պակսը, գա նշանակում է թէ չի կարելի ամուսնանալ հորեղբոր, քեռու,

Տօրաբոլ և մօրաբոլ ճետ եւ այլն. դրա հակառակ այդ արգելքը իրաւունք է տալիս ամուսնանալ Տօրեղբօր. մօրաբոլը, քեռու, Տօրաբոլ աղջկներէ ճետ: Սա մի ընդհանուր պարզ հաշիւ է, որ դժբախտաբար գոյութիւն չունի Ս. Սեդրակեանի համար: Եթէ նա ընդունում է, որ Գունի այդ ենթադրեալ ժողովն արգելում է արեւնակիցներէ չորրորդ աստիճանի պսակը, դա նշանակում է որ Արամը (թ. 3) չի կարող առնել Մարիամին, իր Տօրեղբօր աղջկան (Վրդ աստիճան): Արդ, Արամ ո՞ւմ կարող է առնել:



Դրան Ս. Սեդրակեանի բացատրելու եղանակն ասում է, երբ Արամին արգելուած է առնել Մարիամին, այն ժամանակ Արամը չի կարող առնել կին եւ նրա աղջիկ Անահիտին (Տրդ աստիճան): Անահիտին կարող է առնել Արամի որդի Մանուկը: Այս հաշուով, որ մենք տարօրինակ կ'անուանենք, մէջ տեղը մի աստիճան կորցում է. ամենի համար պարզ է, որ երբ արգելում են չորրորդ աստիճանը, ասել է հինգերորդը հաս է, մինչդեռ Ս. Սեդրակեանի հաշուով երբ արգելում են չորրորդ, արգելում է եւ հինգերորդը (ինչո՞ւ) ու միայն վեցերորդն է հաս¹: Ըստ այդմ, երբ են ընդունում եմ, որ Զահակիվանի ժողովն արգելել է երրորդ աստիճանի պսակը, այսինքն Մհրատիչը չի կարող առնել Մարիամին (Յրդ աստ.), ասել է Մհրատի որդի Արամը կարող է առնել Մարիամին (Վրդ աստ.): Բայց եթէ Ս. Սեդրակեան ընդունի, որ Զահակիվանի ժողովն այդ արգելքն է դրել, այն ժամանակ չորրորդ աստիճանն էլ չհաս է, — Արամը Մարիամին չի կարող առնել, թէեւ կանոնի արգելքը Մհրատի եւ Մարիամի (Յրդ աստ.) պսակի համար է, այլ Արամը կարող է առնել Մարիամի աղջիկ Անահիտին (Տրդ աստ.):

Բաստամանն եւս որոշ չափով կարծես նոյն բացատրութեան եղանակին է հետեւում, թէեւ տասանուերկու: Թուում է թէ աւելի եր-

կար կանգ առանք այս հանգամանքի վրայ, քան թէ արժէր: Բայց ոտ հարկաւոր էր ցոյց տալու համար, թէ երբ ընդունենք Ճիւղագրութիւն հաշուելու այդ ձեւը, մենք որքան հետացած կը լինինք այն կանոնագրի որոշումներէ, որոնք հետեւորութեամբ չայոց ժողովները չհասունութեան կանոններն սահմանել: Խօսքս արտաքին կանոնների մասին է, այսպէս Ս. Սեդրակեան ընդունում է, որ Յուստինեանոսը թոյլ է տալիս չորրորդ աստիճանի արեւակից պսակներ¹, որից պարզ է որ արգելում է երրորդ աստիճանը:

Եթէ Ս. Սեդրակեանի բացատրութեան եղանակով ղեկավարուեալ լինինք կը ստանանք հետեւեալ պատկերը: Եուստինեանոսի կանոնն արգելել է Մհրատին առնել իր եղբօր աղջկան (Յրդ աստ.) Մարիամին. քնականաբար ինչպէս այդ օրէնքի մտքն է, Մհրատի որդի Արամը կարող է առնել Մարիամին (Վրդ աստ.), բայց

Ս. Սեդրակեանի հաշուով այդպէս չէ, Արամը Մարիամին չի կարող առնել, այլ նրա աղջկան — Անահիտին (Տրդ աստ.): Դրա հակառակ յետագարծ հաշուով, երբ Յուստին. թոյլ է տալիս չորրորդ աստիճանի պսակներ, Սեդրակեանի Ճիւղագրութեան որոշելու եղանակն ասում է, արգելքը դրուած է այդ օրէնքով ոչ թէ երրորդ է, այլ երկրորդ աստիճանի արեւակիցներ վրայ. այսինքն. Եուստինեանոսի կանոնը արգելելով երկրորդ աստիճանը, թոյլ է տուել երրորդին առնել չորրորդին: Արդ, որանցից որն էլ վերջնենք հիմնապէս սխալ կը լինի ու կը հակասէ Եուստինեանոսի օրէնքի մտքին, որը նպատակ է ունեցել արգելել երրորդ աստիճանի արեւակից պսակներ, եւ թոյլ տալ չորրորդը, մի բան, որ յանունն յիշուում է, այդ հաշուով Արամը կարող էր առնել Մարիամին (թ. 3. Վրդ աստ.): Այժմ արդէն պարզ է, թէ Ս. Սեդրակեանի որպիսի անհիմնութիւններն է մտքնում Ճիւղագրութիւն կազմելու եւ հաշուելու ինքնուրում, որով կանոնների դրած արգելքները խառնաշփոթում է եւ նրանց միտքը աղճատում: Այստեղ հարեւանցի ակնարկներ, որ Սեդրակեանը Ճիւղագրութիւն հաշուելու խնդրում սարկօրէն հետեւում է Ղբիմեցի Յակովբ վարդապետի Ճիւղագրութիւն հաշուելու եղանակին, որից եւ այդ բոլոր սխալները:

Գանք հետեւոր եղանակացութիւններին.

1. Արդէն լուծուած է այն խնդիրը, որ 527 թ. Ներսէս Բ. կաթողիկոս չէր, որ նա

¹ Ամուսն. խորհրդեր 48 երես. "Գունի ժողովն կամուսն է մի աստիճան առեացնել Զահակիվանի ժողովի կարգաբարութեան վրա . . . այսինքն չոր աստիճան պահել էւ հինգերորդին թոյլ տալ ամուսնանալ վեցերորդի ճետ":

¹ Ամուսն. խորհ. 40 երես:

գահակալել է 549—557 թ. Գուռի այն ժողովը, որ գումարել է Ներսես Բ. 554 թ.ին. եւ երբ հայկական թուականն է գրուել, սահմանած պիտի լինի այն կանոնները, որ կանոնագրերի մէջ մնացել են Ներսեսի եւ Ներշապուհ Մամիկոնէից եպիսկոպոսի, վերնագրով:

2. «43» կանոնների խորագիրը ոչ մի հիմք չի տալիս նոյն իսկ ենթագրելու, որ նոքա Ներսես Բ.ի ժամանակ սահմանուած լինին եւ նրա օրով, կամ առհասարակ այդ Ներսեսինը լինին:

3. «43» կանոնների ընդհանուր բնոյթը ցոյց է տալիս, որ նա խմբագրուած լինի զանազան ժամանակներում ու յետոյ իրար հետ միացուած:

4. Այդ կանոնների լեզուն ընդհանուր առմամբ շատ հասարակ է, ու տեղ տեղ նա մանաւանդ իրենց ընթերցողաձեւերի մէջ գոեհիկի:

5. Այդ կանոնների որոշած չհասական սահմանը երրորդն է, այսինքն, նա Շահապիվանի ժողովի Ժ.Գրիգ կանոնի հետեւողութեամբ սահմանում է բացարձակ արգելք երրորդ աստիճանի կանոնի համար: Նորութիւնը չբերող աստիճանի պատկի համար ոչ թէ արգելք, այլ ապաշխարանք գնելն է՝ առանց սակայն, պսակը լուծելու:

Իբր վերջին խօսք, հարկ ենք համարում ասել, որ մեր նախընթացում ցոյց տուած ներկայ կանոնախմբի ինքնուրոյն մասը սովորյալ իրաւունքի մնացորդներն են, որ խմբագրող մուծել է իր կանոնախմբի մէջ:

Սովորյալ իրաւունքի մնացորդների ժողովածուի հրատարակութեան մէջ ենք ենթագրում մանրամասնօրէն այդ մասին խօսիլ, ուստի եւ փակում ենք ներկայիս մեր խօսքը:

(Հորհուրիսի)

ԱՐՄԷՆ ԱՅՏԵԱՆ



Ս Ա Ց Ե Ն Ա Պ Բ Ա Վ Ա Ն

ԿԻՐԻՐԻՈՆ ԿԼԹՈՂԻԿՈՍ ԱՐԱՅ
ԳՈՏՄԻՐԹԻՒՆ ՀՈՒՆՎՈՐԿԵՆ ՅՈՐԴՈՐԻՐԹԻՍՆԵՐ
ԵՐԹՆԵՐՈՐԳ ԳՐՈՐԻ ՄԷՋ

Բառասանմանայ քղնան Հայոց Անդ. Գաստիւթննէն
574—610:

Գ Լ ՈՒ Խ Ա.

Մէքուսիւն էր Արցոյ եւ Հոյոյ ընդ միմեռ.

«... եւ ոչ թէ բար եւ խօսք չէին ուրիշ եղեւ ինչպէս, իսկ այժմ ուսմէ՝ եղին»:

Այս խօսքերս կ'ուղղէր Կիրիոն Հայոց Աբրահամ Կաթողիկոսին թուականէս Տշդիւ 1300 տարի յառաջ՝ յամի 608, երբ սկսած էին խանգարել երկու եկեղեցեաց մէջ խաղաղական յարաբերութիւնը: Ի՞նչ «միաբանութիւն», էր այն, որուն քայքայման պատճառներն կը հարցաքննէր Կիրիոն: Երկու եկեղեցեաց պետերու հարցը հարկու եկեղեցական տեսակետով ըլլալու էր, «Միաբանութիւն», իսպաի գրօշի ներքեւ:

Քրիստոնէական բարձր վարդապետութեան հոսանքն Փոքր Ասիոյ հիւսիսային ժողովրդաց մէջ Յունական Արեւմուտքին եւ Ասորիքէն, իւր խաղաղական նուաճումներն դիւրաւ կատարեց Հայաստան, Արաստան, Աղուանք եւն. որչափ ալ զբուցախառն ըլլայ ժողովրդացոց դարձի պատմութիւնն, այն չի կրնար ուրացուիլ, թէ Գ. Գարու առաջին տասնեակին քրիստոնէական լծոյն ներքեւ կը գտնուէին արդէն այս երեք աշխարհները — միջնորդութեամբ՝ գլխաւորաբար Հայոց Լուսաւորչին: Այս է քննիչ ժողովրդացոց դարաւոր հանդուժմն, եւ զայս կ'աւանդեն դաւար յիշատակաբանք՝ Ե. Գարէնի վեր: Լուսաւորչի այս գերն կապեց դրացի ժողովրդաց արտերն Հայոց եկեղեցւոյն հետ հոգեւոր միութեամբ, եւ առաւ Հայոց եկեղեցւոյն տեսակ մը գերիշխանութիւն հաւատոյ իրաց մէջ եւ եկեղեցւոյ աւանդութեան պահպանութեան նկատմամբ — Արաց եւ Աղուանից վրայ. այս մասին խօսեցանք բաւականաչափ արդէն: Այս հանդուժմն յաճախ կը նշմարուի Հայոց եկեղ. պատմութեան մէջ. Արկանի մարգարանն Սմբատ կը գրէր 608ին Յուրտաւայ Մովսէս եպ.ին՝ Սուրբն Գրիգոր զայն (հաւատ) եւ նոցա (Արաց) եւ մեք զնոյն ունիք, (174). Նոյնը կը յիշեցնէին իրարու Հայոց եւ Արաց կաթողիկոսները (էջ 180 եւն) եւ Արթմանէս կաթ. անդապահն յամի 606 Յուրտաւայ եկեղեցւոյն (էջ 128), որ իւր պատասխանին մէջ կը գաւանդէր նոյն «գտուք եւ զուղղ հաւատն, զբ Մեծին Ս. Գրիգորի սերմանեալ էր յայս ի կաւխասային կողմանն» (Գ. Թղ. 132):

Գրիգոր Լուսաւորչի գործակցութեան եւ այնու այս ազգաց համար իւր մեծ նշանակութեան

1 քնն ՀԱ. 1907, էջ 289 եւն: Հմտ. եւ Ագաթ. 627-628. Փարպ. 50 եւն. Գիլք Թղթոց, 128, 132, 174, 180 եւն: